ՀԷՍՍԷՆԻ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ

ARMENISCHER
KULTURVEREIN
IN HESSEN e.V.

Gegründet 1968
Gemeinnütziger Verein

Armenischer Kulturverein in Hessen e.V., Postfach 10 01 29, D-60001 Frankfurt

Վարչութիւն/Der Vorstand

Շրջաբերական թիվ 3 / Rundschreiben 3 / 2012

Ֆրանկֆուրտ/ Frankfurt, 08.09.2012

Սիրելի Միութենականներ և Հայրենակիցներ,

Հէսսէնի Հայ Մշակութային Միության վարչությունը սիրով Ձեր ուշադրությանն է ներկայացնում միության հետագա ծրագրերը.

2012թ. սեպտեմբերի 15-ին,
շաբաթ, ժամը՝ 17:00-ին

ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԿԼՈՐ ՍԵՂԱՆ»-Ի ՇՈՒՐՋ

«Հայկական շախմատի պատմությունը»: Հեղինակ և վարող՝ **Արսեն Աբրահամյան**, շախմատի Հէսսէնի մրցանակակիր, մեր շաբաթօրյա դպրոցի սան: Հասցեն՝ Միության հանդիպման վայր՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

2012թ. սեպտեմբերի 22-ին,
շաբաթ, ժամը՝ 17:30-ին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ 21-ՐԴ ԱՄՅԱԿ

Ուրախ հավաքույթ մեր միության անդամների մասնակցությամբ: Հասցեն՝ Միության հանդիպման վայր՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

2012թ. հոկտեմբերի 12-ին,
ուրբաթ, ժամը՝ 20:00-ին

ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈ

Այս տարի Երևանը ճանաչվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից որպես համաշխարային գրքի մայրաքաղաք: Միաժամանակ նշվում է հայ տպագրության 500-րդ ամյակը: Այս առիթով մեր գրական երեկոյի հյուրերն են Ֆրանկֆուրտի համաշխարհային գրատոնավաճառի մասնակից հայ գրողները և հրատարակիչները:
Հասցեն՝Gemeindesaaal, Alt-Hausen 3-5, Frankfurt-Hausen:

2012թ. հոկտեմբերի 13-ին,
սկիզբը՝ ժամը **19:00**-ին
մուտքը՝ ժամը 18:30-ին

ԴԱՍԱԿԱՆ ՀԱՄԵՐԳ՝

Գերմանիայի հայ երիտասարդ երաժիշտների մասնակցությամբ: **Հէսսէնի Հայ Մշակութային Միության** և **«ՀԱԻԿ» Գերմանահայ Ուսանողական Ակումբի** միասնական ծրագիր: Մուտքն անվճար է, խնդրվում է տոմսերը պատվիրել հետևյալ էլեկտրոնային հասցեով՝ armenischesklassikkonzert@yahoo.de:
Մանրամասն տեղեկություններ՝ www.armenia.de:
Հասցեն՝ Engelbert Humperdinck Saal, Dr. Hochs Konservatorium Frankfurt, Sonnemannstr.16, 60314 Frankfurt.

1. Vorsitzende: Lusine Vardumyan
2. Vorsitzender: Mher Beglaryan
Tel.: 0160- 99 53 55 52
Schriftführer: Armin Preuß
Schatzmeisterin: Evet Dujak
Tel.: 0163- 60 44 166
Beisitzer: Vahe Katschaturian
Bankverbindung:
Frankfurter Sparkasse
Konto-Nr. 169 417
BLZ 500 502 01

Vorstand auch per Mail erreichbar: info@armenier-frankfurt.de www.armenia.de

2012թ. նոյեմբերի 11-ին,
կիրակի, ժամը՝ 12:00-ին

ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳ

Այն կմատուցի Հոգեշնորհ Տ. Սերովբէ Վարդապետ Իսախանեանը՝ տալով օրվա պատգամը: Պատարագից հետո եկեղեցուն կից սրահում տեղի կունենա՝

ժամը
14:00-ին

ՀԱՆԴԻՊՈՒՄ «ԿԼՈՐ ՍԵՂԱՆ»-Ի ՇՈՒՐՋ

«Հայ նկարիչ-քանդակագործ Երվանդ Քոչար»: Ծրագրի հեղինակ և վարող՝ երիտասարդ քանդակագործ Իշխան Նազարյան:
Հասցեն՝ Alt-Hausen 3-5, Frankfurt am Main (Hausen):

2012թ. դեկտեմբերի 8-ին,
շաբաթ, ժամը՝ 16:00-ին

ՏԱՐԵՄՈՒՏԻ ՈՒՐԱԽ ՀԱՆԴԵՍ

Այս տարի մեր հանդեսի հյուրերն են Քյոլնի Սիլվա Կապուտիկյան կանանց մշակութային միության **«Զանգակներ թատերախմբի»** երեխաները: Իսկ հանդեսի վերջում մեզ կայցելեն Ձյունանուշն ու Ձմեռ Պապը՝ նվերներով լի պարկը շալակին:
Մուտքը մեծերի համար՝ 5 €, մինչև 12 տարեկան երեխաների համար՝ անվճար:
Հասցեն՝ Saalbau Gutleut, Rottweiler Straße 32 60327 Frankfurt am Main

2012թ. դեկտեմբերի 31-ին,
Երկուշաբթի, ժամը՝ 20:00-ին

ՏԱՐԵՄՈՒՏԻ ՈՒՐԱԽ ԵՐԵԿՈ

Հայկական երգով ու պարով, մեծ և տոնական դահլիճում միասնաբար կդիմավորենք Նոր Տարին:
Խնդրվում է յուրաքանչյուրին իր հետ բերել ուտելիքներ և խմիչքներ: Մուտքը (ըստ ընտանիքի)՝ միության անդամների համար՝ 9 €, ոչ-անդամների համար՝ 18 €: Տեղերը սահմանափակ են: Ցանկացողներին խնդրվում է մինչև դեկտեմբերի 3-ը տեղերը պատվիրել հետևյալ էլեկտրոնային հասցեով. info@armenier-frankfurt.de:
Հասցեն՝ Saalbau Volkshaus Sossenheim, Siegener Straße 22, 65936 Frankfurt am Main

* (հնարավոր են ծրագրի փոփոխություններ, հետևեք մեր ինտերնետային կայքին՝ www.armenia.de)

Միության հայկական շաբաթօրյա դպրոցի և պարի դասընթացները շարունակվում են միության հավաքատեղում, ամեն շաբաթ օր՝ ժամը 15:00-19:00: Լրացուցիչ առաջարկվում են նաև քանդակագործ Իշխան Նազարյանի հայ կերպարվեստի (ամիսը երկու անգամ), ինչպես նաև երաժիշտ Արեն Էմիրզյանի երգ-երաժշտության դասընթացները (ամիսը մեկ անգամ):
Հասցեն՝ Hamburger Allee 52a, 60486 Frankfurt:

Կարևոր տեղեկություն կանոնադրության փոփոխության վերաբերյալ
Համաձայն 2012թ. փետրվարի 26-ի ընդհանուր ժողովի որոշման՝ միության կանոնադրությունը պետք է վերանայվի և ենթարկվի փոփոխությունների: 2013 թ. միությունը նախատեսում է հատուկ ժողով՝ քննարկելու կանոնադրության հնարավոր փոփոխությունները: Այդ կապակցությամբ նոր առաջարկներ ունեցող բոլոր անդամներին խնդրվում է մինչև **դեկտեմբերի 1-ը** իրենց ցանկալի փոփոխությունների առաջարկները **գրավոր** հանձնել վարչությանը:
Միաժամանակ վարչությունը ցանկանում է մեր միության համար նկարային „Logo“ ստեղծել: Խնդրում ենք մինչև **դեկտեմբերի 1- ը ուղարկել ձեր գրավոր** առաջարկները վարչությանը:

Հայ շախմատի դասընթացներ շաբաթօրյա դպրոցում՝
Արսեն Աբրահամյանի ղեկավարությամբ, մեր շաբաթօրյա դպրոցի սան, Հէսսէնի շախմատային մրցանակակիր: Մանրամասն տեղեկություններ՝ www.armenia.de:

Շրջաբերականը ոչ-անդամների համար
2013 թ. սկսած իրենց շրջաբերականը գրավոր նամակով կստանան **միայն միության անդամները:** Ոչ-անդամները հնարավորություն կունենան ներբեռնել շրջաբերականը Հէսսէնի Հայ Մշակութային Միության կայքից՝ www.armenia.de: Այն անձինք, ովքեր միության անդամ չեն, բայց դարձյալ ցանկանում են գրավոր նամակ ստանալ, կարող են դիմել վարչությանը:

Հէսսէնի Հայ Մշակութային Միության Ինտերնետային նոր կայքը
Մեր միության ինտերնետային նոր կայքի հասցեն հետևյալն է՝ www.armenia.de:
Պատասխանատուներն են Վահէ Խաչատրյանը և Արմին Պրոիսը:
Վարչության էլեկտրոնային հասցեն՝ info@armenier-frankfurt.de: Այցելեք մեր էջը և ծանոթացեք զանազան թեմաների հետ:

Հանձնախմբերի ընտրության արդյունքները և վարչության պատասխանատու ամդամները.

1. Կրթություն **պատասխանատու:** Լուսինե Վարդումյան
ուսուցչական կազմը
2. Մշակույթ **պատասխանատու:** Մհեր Բեգլարյան
Դիցուհի Չիչեք, Իվետ Դույակ,
Սուսաննա Միսակյան, Հերմինե Պրոիս-Դավուդյան, Շուշան Թումանյան
3. Սոցիալական **պատասխանատու:** Իվետ Դույակ
Գրետա Խաչատրյան
4. Երիտասարդական **պատասխանատու:** Արմին Պրոյս
Երիտասարդական խումբ
5. Կանոնադրություն **պատասխանատու:** Վահէ Խաչատրյան
Մասիս Նահապետյան

Ցանկացողները հնարավորություն ունեն տարվա ընթացքում ընդգրկվել որևէ հանձնախմբի մեջ: Խնդրում ենք դիմել վարչությանը:

--------- **տեղեկություններ** --------- **տեղեկություններ** --------- **տեղեկություններ** ---------

2012թ. Մեպտեմբերի 29-ին, **շաբաթ, ժամը 16:00-ին**, Հանաուում տեղի կունենա ՏԵՐՍԻՅԱՏ միության «Տերսիմցի Հայերի Հանդիպում»: Մեր միության «Անի» պարախումբը սիրով կմասնակցի այդ մշակութային ծրագրին՝ ժամը 19-ին: Մուտքը՝ 15,- €: Հասցեն՝ Kulturhalle Steinheim, Ludwigstraße 67, 63456 Hanau:

****

2012թ. Մեպտեմբերի 29-ին, **շաբաթ, ժամը 20:00-ին,** տեղի կունենա հայտնի երգիչ Արեն Էմիրզյանի համերգը: Մուտքը միության անդամների համար՝ 16,40- €, իսկ մինչև 12 տարեկան երեխաների համար՝ 12,- €: Խնդրվում է տոմսերի համար դիմել Մհեր Բեգլարյանին, հեռախոս՝ 069-7895430: Մանրամասն տեղեկություններ՝ www.armenia.de: Հասցեն՝ Brotfabrik, Bachmannstraße 2-4, 60488 Frankfurt:

****

2012թ. նոյեմբերի 3-ին, շաբաթ, ժամը 17:00-ին մեր միության շաբաթօրյա դպրոցի աշակերտները կայցելեն Օբերուրսելի «Spectaculum» Բոուլինգ-կենտրոն: Աշակերտների համար մուտքը անվճար է: Խաղի սկիզբը 17:00-ից մինչև 19:00-ը: Միության հանդիպման վայրը և շաբաթօրյա դպրոցը այդ օրը փակ են: Խնդրվում է մասնակցողներին ժամը 16:30-ին լինել հետևյալ հասցեում.
Հասցեն՝ Spectaculum zu Oberursel, Ludwig-Erhard-Straße 34, 61440 Oberursel:

****

2012թ. հոկտեմբերի 14-ին, կիրակի, ժամը 12:00-ին՝ միասնական այցելություն Ֆրանկֆուրտի միջազգային գրատոնավաճառի հայկական տաղավար, որտեղ մեր դպրոցի աշակերտները հանդես կգան փոքրիկ մշակութային ծրագրով: Միության շաբաթօրյա դպրոցի աշակերտների համար մուտքը անվճար է:

****

2012թ. հոկտեմբերի 18-ից մինչև 21-ը՝ «Հայ Մշակութային Օրեր» Շտուտգարտում: Մանրամասն տեղեկություններ՝ http://www.armenische-kulturtage-stuttgart.de:

****

Դրամական նվիրատվություն Գերմանահայ Կենտրոնական Խորհրդին
Գերմանահայոց Կենտրոնական Խորհուրդը Ձեր աջակցությանն է դիմում Բեռլինում կենտրոնական գրասենյակ բացելու համար, որին կից կստեղծվեն նաև հայկական կենտրոնական գրադարան և արխիվ: Մանրամասն տեղեկություններ՝ http://www.zentralrat.org/de/Armenisches%20Bibliothek-%20und%20Archivzentrum%20in%20Deutschland: